



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի
համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6, Հեռ. (0222) 57070 ,
ptghni.kotayq@mta.gov.am

N 403

04 դեկտեմբեր 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների, Ձեզ է ուղարկվում Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի N 135 որոշումը:

Առդիր 2 ֆայլ:

04-Dec-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 135

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 15-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. 2020 թվականի դեկտեմբերի 02-ին Պտղնիի համայնքապետարանում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ:

2. Հաստատել Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ՝ Գայանե Սուրենի Բելլոյանին:

4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարատ Տարիելի Պետրոսյանին՝

1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

2) համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակել Պտղնի

համայնքի 2021 թվականի բյուջեի և Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

16-Nov-20

X



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. նոյեմբերի 16
գ. Պտղնի

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի «Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2020 թվականի դեկտեմբերի 02-ին ժամը՝ 12:00-ից մինչև 13:00-ն Պտղնի համայնքապետարանում կկայանա հանրային բաց լսումներ՝ Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Պտղնի համայնքապետարանի պաշտոնական կայքում (www.ptghni.am) հրապարակված Պտղնի համայնքի 2021 թվականի բյուջեի և Պտղնի համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի նախագծերի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել ptghnihamaynq@mail.ru էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ:

Համայնքապետարանի աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

16-Nov-20

X 
